

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 22/4

2 սեպտեմբերի 2016թ.

Քննարկվեց Ա/Ձ Կամո Մարությանի գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի իրավաբանական վարչության պետի 09.06.2016թ-ի թիվ 327339/02 որոշման դեմ:

Ա/Ձ Կամո Մարությանի գանգատում բերված փաստարկները.

Ա/Ձ Կամո Մարությանը հայտնում է, որ 72 տարեկան է, զբաղվում է ձեռնարկատիրությամբ, թոշակառու է, սակայն թոշակը չի բավարարում: Հայտնում է նաև, որ պարտաճանաչ ամեն եռամսյակը մեկ ներկայացրել է համապատասխան հաշվետվությունները: Սակայն չիմացության պատճառով չի ներկայացրել 2015թ. տարեկան եկամուտների հաշվարկը:

Ա/Ձ Կամո Մարությանը խնդրում է չենթարկել վարչական տուգանքի, քանի որ թոշակառուի համար 20.000 դրամը քիչ գումար չէ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի իրավաբանական վարչության պետը, քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ 3185 գործը և ուսումնասիրելով վարչական իրավախախտման վերաբերյալ 01.06.2016թ. թիվ 3185 արձանագրությունը պարզել է, որ Ա/Ձ Կամո Մարությանը «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետում չի ներկայացրել 2015թ. տարեկան եկամուտների հաշվարկը:

Նկատի ունենալով, որ արարքը նախատեսված է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.1-րդ հոդվածի 2-րդ մասով, ուստի ղեկավարվելով նույն օրենսգրքի 32-րդ հոդվածի 2-րդ մասով, 244.2-րդ, 281-րդ հոդվածներով և 282-րդ հոդվածի 1-ին կետով ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի իրավաբանական վարչության պետի կողմից 09.06.2016թ. ընդունվել է վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 327339/02 որոշումը (այսուհետ նաև Որոշում), որով Ա/Ձ Կամո Մարությանը ենթարկվել է վարչական պատասխանատվության՝ գումարով 20.000 դրամի չափով:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հարկ վճարող ֆիզիկական անձինք պարտավոր են հարկային տարվա համար մինչև տվյալ տարվան հաջորդող տարվա ապրիլի 15-ը ներառյալ բացառապես էլեկտրոնային եղանակով հարկային մարմին ներկայացնել տարեկան եկամուտների մասին հաշվարկ, իսկ ամբողջ հաշվետու տարվա ընթացքում օրենքով սահմանված կարգով ավելացված արժեքի հարկ վճարող չհամարված հարկ վճարողները՝ տարեկան եկամուտների մասին պարզեցված հաշվարկ:

Իր հերթին, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169.1-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հայտարարագիրը կամ հաշվարկը կամ օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանված այլ փաստաթուղթ, բացառությամբ ֆինանսական հաշվետվությունների, հարկային մարմիններ կամ օրենքով սահմանված դեպքերում տեղական ինքնակառավարման մարմիններ սահմանված ժամկետում չներկայացնելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկից մինչև քսանապատիկի չափով:

Քննարկվող դեպքում Ա/Ձ Կամո Մարությանի կողմից սահմանված ժամկետում չի ներկայացվել 2015թ. տարեկան եկամուտների հաշվարկը, ինչի համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ենթարկվել է վարչական պատասխանատվության:

Միևնույն ժամանակ, Հանձնաժողովը հաշվի է առնում այն հանգամանքը, որ Ա/Ձ Կամո Մարությանը թոշակառու է, ինչպես նաև ունի հաշմանդամության կարգ: Հաշվի առնելով նշված հանգամանքը, ինչպես նաև ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 33-րդ հոդվածի դրույթներով, Հանձնաժողովը գտնում է, որ վարչական պատասխանատվության չափը 20.000 դրամի փոխարեն անհրաժեշտ է սահմանել 10.000 դրամ:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի իրավաբանական վարչության պետի 09.06.2016թ-ի թիվ 327339/02 որոշմամբ սահմանված վարչական պատասխանատվության չափը նվազեցնել 10.000 դրամի չափով:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողով կամ ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ